«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» ԹԵՄԱՏԻԿ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ քննարկում «Հանրակրթության արդի իրավիճակը Հայաստանում և Եկեղեցու դերը կրթական համակարգում» թեմայով՝ կազմակերպված Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կլոր Սեղան» հիմնադրամի և Կաթոլիկ օգնության ծառայության կողմից:

Աղոթքից հետո քննարկման մասնակիցներին իր ողջույնի խոսքն ուղղեց «Կլոր Սեղան»-ի հիմնադրամի նախագահ, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը՝ ուրվագծելով կրթական ոլորտում առկա խնդիրները:

Ապա քննարկման մասնակիցներին հիմնադրամի գործադիր տնօրեն դր. Կարեն Նազարյանը ներկայացրեց «Կլոր Սեղան»-ի «Քննարկումներ ազգային կրթական քաղաքականության վերաբերյալ» ծրագիրը, որը սկսվել է իրագործվել 2004 թվականից, համագործակցաբար ՀՀ Կրթության և գիտության նախարարության: Ծրագրի նպատակն է՝ հանրությանն իրազեկել ազգային կրթական քաղաքականության ձևավորման գործընթացին: Մասնավորաբար ծրագիրը հետամուտ է հատուկ կարիքավոր երեխաների և պրոֆտեխնիկական կրթության խնդիրների ուսումնասիրմանը և լուծմանը, ինչն իրագործվելու է «Կլոր Սեղան»-ի անդամ Եկեղեցիների աջակցությամբ: Սա արդեն երկրորդ քննարկումն է: Առաջինը տեղի է ունեցել 2004 թ. նոյեմբերին՝ մասնակցությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ Կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանի:

Քննարկմանը զեկուցմամբ հանդես եկավ նաև ՀՀ Կրթության և գիտության նախարարության Կրթության Ազգային ինստիտուտի փոխտնօրեն Գագիկ Մելիքյանը՝ ներկայացնելով կրթական ոլորտում առկա խնդիրները, առավելաբար հատուկ կրթության կազմակերպման դժվարությունները: Անդրադարձ եղավ մասնագիտական՝ տեխնիկական կրթության ոլորտին, որն, ըստ էության, այսօր անմխիթար վիճակում է:

«Այլընտրանքային ծառայությունների կենտրոն» փորձնական ծրագրի մասին խոսեց «Աստղիկ» հասարակական կազմակերպության նախագահ Լևոն Ներսիսյանը:

Քննարկումների ընթացքում կարևորվեց Եկեղեցու դերը հիշյալ երկու ոլորտների կրթության կազմակերպման հարցում:

Քննարկումներն ամփոփելուց հետո նախանշվեց նաև «Կլոր Սեղան» հիմնադրամի գործունեությունը կրթական ծրագրերի իրականացման ոլորտում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ